ԹԵՄԱ 1. ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ ՀԻՆ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ

§ 6. ԲԱԲԵԼՈՆԻ ՀԻՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

1

Բազալտե 9-մետրանոց այդ սյուներից մեկը ներկայումս պահվում է Փարիզում՝ Լուվրի թանգարանում: Վրան սեպագրով փորագրված են Համմուրապիի օրենսգրքի 282 օրենքները, որոնցից մոտ 30-ը ջնջված են: Սյան վերին մասում պատկերված է Համմուրապի արքան, որը Արևի և արդարադատության աստված Շամաշից ստանում է գերագույն դատական իշխանության պատվանշանները՝ օղակը և գայիսոնը:

2

Համմուրապիի օրենքներից

Եթե որդին հարվածել է հորը, ապա նրա ձեռքը պետք է կտրվի:

Եթե բժիշկը վիրահատում է ազատ մարդուն, և նա մահանում է, ապա նրա ձեռքը պետք է կտրել:

Եթե մարդը կեղծ վկայություն տա և ապացուցի իր ասածը, և եթե դրա պատճառով մարդ մահանա, ապա այդ մարդը պետք է սպանվի:

Եթե մարդը գողանա տաճարի կամ պետության սեփականությունը, ապա նա պետք է սպանվի, իսկ նա, ով գողացածը ստացել էր այդ մարդուց, նույնպես պետք է սպանվի:

Եթե մարդն ապտակի իրենից բարձրին (մեծատոհմիկի, քրմի), պետք է նրան 60 անգամ հարվածել եզան կաշվից պատրաստված մտրակով:

Եթե մարդն իրեն հավասարին ապտակի, նա պետք է վճարի տուգանք:

Եթե մարդու տունն այրվում է, և մեկ ուրիշը, որ գնացել է այնտեղ՝ կրակը մարելու, աչք դնի նրա ունեցվածքի վրա, այդ մարդուն պետք է նետել հրդեհի մեջ:

1

3

Միջագետքի հյուսիս-արևելյան մասում՝ Տիգրիսի միջին հոսանքի շրջանում, ***Ք.ծ.ա. III հազարամյակում*** աքքադացի վերաբնակիչ-ները հիմնել էին ***Աշշուր քաղաք-պետությունը***, որի անունով այդ տարածքը հետագայում կոչվեց ***Ասորեստան:***

Աշշուրը կարևոր առևտրական կենտրոն էր Աքքադի պետութ-յան, իսկ հետագայում Ուրի թագավորության կազմում: Այդտեղով էին անցնում Հայկական լեռնաշխարհից դեպի Միջագետք և Իրանից դեպի Փոքր Ասիա ու Միջերկրականի երկրներ տանող առևտրական ուղիները: Ք.ծ.ա. XVIII դ. Աշշուրը Համմուրապիի պետության կազ-մում էր, իսկ Ք.ծ.ա. XVI-XV դ. հարկատու էր Միտանիին:

Ասորեստանը նոր վերելք ապրեց Ք.ծ.ա. XIII- XII դ.: Սալմանասար I արքան գրավեց Միտաննին, իսկ նրա որդին՝ ***Թուկուլթի-Նինուրտե I-ը (1244-1208)*** գրավեց Բաբելոնիան և հաջող արշավանքներ կա-տարեց դեպի Հայկական լեռնաշխարհ՝ ***Նաիրի երկրների*** դեմ:

Ք.ծ.ա. XI դ. Ասորեստանը ենթարկվեց Սիրիայի տարածքից ***արամեական ցեղերի*** ներխուժումներին, առժամանակ թուլացավ և կորցրեց նվաճված տարածքները:

Իրանի հարավում՝ արևելքից Շումերին հարող տարածքում, ***Ք.ծ.ա. III հազարամյակում*** առաջացավ ***Էլամ պետությունը:*** Էլամցիները հաճախակի էին հարձակվում Միջագետքի քաղաքնե-րի վրա և հեռանում մեծ ավարով: Ք.ծ.ա. XII դ. նրանք գրավեցին Բաբելոնը և ավար տարան Համմուրապիի օրենքներով սյուներից մեկը: Միջագետքի տիրակալները հիմնականում կարողանում էին պաշտպանել իրենց երկիրը, սակայն չէր հաջողվում ընդհանրապես վերջ դնել էլամական ներխուժումներին: Ասորեստանից Ք.ծ.ա. VII դ. կրած ջախջախիչ պարտությունից հետո միայն էլամցիների ներ-խուժումները դադարեցին: